Աստուածոյ եւ իքրոս Տեառնս Մայրաքաղաքի-
Կոստանդնու Պօլսոյ, Յոհաննէս բանի պաշտօնեայս,
փոքր քաղաքէ Բաղիշեցի, յետնասեան աշակերտ
Տեառն Վարդանայ ամենիմաստ եւ աստուածաբան
վարդապետի հանգուցելոյ առ Քրիստոս, եղէ ցանկացող
սոյն մեկնութեանս Աստուածաբանութեան եւ փոխ
առեալ օրինակն փոխադրեցի ի հեղինակէ Արքեպիսկոպոսէ
Դաղմատականէ Պետրոսի կոչեցելոյ եւ ետու թարգ-
մանել մեծաւ ջանիւ ի Ցէշտաւ հարց իմոց Տեառն
Վարդանայ աստուածաբան եւ առաքելաշաւիղ
վարդապետի Բաղիշեցւոյ հանգուցելոյն առ Քրիս-
տոս եւ Տեառն Գրիգորի սրբէակենցաղ Արքե-
պիսկոպոսապետի Սրբոյ քաղաքին Երուսաղէմի
եւ առաքելական սրբոյ Աթոռոյն Յակոբայ,
եւ իմս համանունդ եղբօր Տեառն Աբրահամու
Ամենայն Հայոց գերապատիւ սրբոյ Քահանայա-
պետի եւ վերջապէս ի յիշատակ անյիշելի հոգւոյն
իմոյ բազմամեղի, որ հանդիպողացն սոյն Գրքոյս,
աղօթիւք բուժել յանբուժելի վիրաց իմոց։ Եւ
սոյն գրքոյս աստուածաբանութեան եղեւ թարգ-
մանիչ Խարբերդցի Ղուկաս յոքնահանճար Վարդա-
պետն, կարի քաջ տեղեակ լատինական լեզուի, որ
քերթէ մայն ի մակերեւոյթ նախադասութեան նշմարեալ՝
անդէն հայկական բառի իբր ճշմարտին շրջոց ար-
տաբերէր։ Վասն որոյ տեսեալ երկոքին Որդեակքն
իմ ի Քրիստոս Յարութիւն եւ Յակոբ Վարդապետքն
սոսկումնաւէրք, զսորդաբուղխ բղխումն թարգմանեալ
նորին Վարդապետի Ղուկասու, յանձն առին
գրել ինքեանք փոխ առ փոխ եւ իւրեանց
գծագրութեամբ սակաւ ժամանակս, գրեթէ մինչեւ
յաւուրն ամիս, եղերեցին զսոյն գիրքս եւ զվախճան
թարգմանութեան։ Ինձ, որ եմ հայր նոցին, հո-
գեսէր եւ գորովագութ փութով ետուն տեսանել
որոց եւս մասն բարեաց եղիցի։

Յիշեսջիք եւ զամենայն աշակերտեալ որդեակ-
մեր ի Քրիստոս, որք մեզ յաւաման տեղեկերէն թէ